



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<ՈՁ >> *Մարտի* 2024թ.

N ՄՈ/ 198 -Ա

ք. Արմավիր

**«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Վ. ՌԶՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ N 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ Ոչ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մարգարիտ Սարգսյանի 2024 թվականի ապրիլի 29-ի դիմումը.

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. «Վաղարշապատի Վ. Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարգարիտ Սարգսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2024 թվականի մայիսի 2-ից հունիսի 7-ը ներառյալ՝ 25 աշխատանքային և 2 տոնական օր տևողությամբ:
2. Մարգարիտ Սարգսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Վաղարշապատի Վ. Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Վաղարշապատի Վ. Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Աստղիկ Վիրաբյանին:

3. «Վաղարշապատի Վ.Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Աստղիկ Վիրաբյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի մայիսի 2-ից հունիսի 7-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մարգարիտ Սարգսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի հունիսի 10-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



2024-05-02 16:52:37 GMT+4
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝

Վ. ՆՐԻՂԱԹՅԱՆ